

ցեալք ի զաւրագլխացն Պարսից, երեք հազարք հինգ հարիւր քառասուն եւ չորս¹ այր:

Խ. Եւ յետ վճարելոյ այսպէս գործոյ պատերազմին, եւ մարդասիրին Աստուծոյ զիւր սիրելիսն առ ինքն կոչելոյ՝ հրովարտակ առնէր Մուշկան Նիւսալաւուրտ առ թագաւորն Արեաց Յազկերտ, եւ զելս գործոյ պատերազմին գիտել տայր, գրեալ գյաղթութեանն աւետիս եւ յանուանէ զհամար անկելոցն յերկոցունց կողմանցն պատերազմին: 2 Չոր լուեալ արքային Յազկերտի զկոտորումն² լաւ արանց ի զնդէն Պարսից եւ զմահ առն Վարդանայ՝ յահաւոր սուգ ընկղմեալ խռովէր, յիշելով զքաջութիւնն առնն եւ զլաւութիւնն՝ զոր արարեալ³ ընդ թշնամիս բազում անգամ ի վերայ աշխարհին Արեաց եցոյց: 3 Պատասխանի առնել հրամայէր հրովարտակին, եւ զՄուշկան Նիւսալաւուրտ հանդերձ զնդան ի դուռն կոչէր: 4 Եւ զԱտորոմիզդ ոմն անուն, յաշխարհէն Յայոց, մարգպան հրամայէր թողուլ, որում յանձն առնէր հրովարտակով զմարդիկն⁴ Յայոց չընդոստուցանել, այլ սիրով նուաճել, եւ զպաշտան քրիստոնէութեանն համարձակապէս ունել ամենեցուն⁵: 5 Եւ տեսեալ Մուշկանայ զհրովարտակն թագաւորին Յազկերտի, եւ լուեալ զբանսն ի հրովարտակէն՝ կացուցանէր ի Յայս մարգպան զԱտորոմիզդ Արշական, եւ զիրս ամենայն ըստ գրեցելոցն ի հրովարտակէն թագաւորին՝ նմա յանձն առնէր: 6 Դառնայր Մուշկանն հանդերձ աւագանւովն եւ այլ ամենայն զնդին յերկիրն Պարսից: 7 Եւ մնացեալ Ատորոմիզդ մարգպան աշխարհիս Յայոց՝ բազում թուղթս խաղաղութեան առնէր ի տեղիս տեղիս Յայոց աշխարհին, թէ «Եկա՛յք շինեցարո՛ւք աներկիւղութեամբ, եւ մի՛ ինչ զարհուրիք». յորս գրէր եւ կնքէր աւետաւոր բանս, շնորհել ամենեցուն զկարգ քրիստոնէութեան, որպէս եւ կամիցի ըստ իւրաքանչիւր կամաց: 8 Որք ի համբան՝ խնդութեամբ ի Պարսից եւ ի Սիւնեաց ժողովեցան ամենեքեան:

ԽԱ. Սա եւ ի վերայ ժողովելոցն առ երանելին Յմայեակ յամուրսն Տայոց՝ գունդ կազմէր այրընտիր բազմութեամբ ի Պարսից եւ ի Սիւնեաց. եւ յերկուս բաժանեալ զգունդն՝ կարգէր նոցա զաւրագլուխս զԱրտէն Գաբեղեան եւ զՎարազշապուհ⁶ Պալունի: 2 Զանգի բազմութիւն փախստեիցն Յայոց, նախարարք եւ սեպուիք, ոստանիկք եւ ռամիկք, դիմեալ ի յերկիրն Տայոց՝ ժողովէին առ Յմայեակ եղբայր սրբոյ զաւրավարին Վարդանայ, որ

1 2. բառերով գրուած թուից առաջ ունի բերուած 2. թուից յետոյ էլ ունի բերուած վշխդ. 2. երեսի ներքեի լուսանցքում ունի՝ աւաղ զհայք յայնմ աւրէ եւ առ յապայ

2 ԱԲտ. զկատարումն. Գտ. ուղղել է զկոտորումն (ըստ Ն. Բ.). 2. այսպէս

3 ՏՏ. արարեալ էր

4 Ատ. այստեղ եւ ընդհանրապէս՝ մարդիկքն

5 ՏՏ. առնել ամեն...

6 2. զՎարաշապուհ